


ՍԵՂՄԱՆՑ ԴԲԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Թարգմանեց եւ խմբագրեց՝
ՄԱՇՏՈՅ ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ

Ê Ø ´ ² ¶ ð à ô Â ° ² Û Î à Ô Ø Æ ò

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպաստս բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Ø³ßi áó ì ³Ñ; Ô³¹/²ñ»³Ÿ

Մեր հոգեւոր զգացումներն ու կողմնորոշումները, Աստուծոյ մասին մեր գաղափարներն ու մարդկային վիճակի վերաբերեալ մեր իմացումները նոյնը չէին լինի, եթէ մարդկութեանը աւանդուած չլինէր Սաղմոսների գիրքը: Այն ինչ որ կերպ ձեւաւորել է մեր հոգին, առաւել՝ քան որքան կարծում ենք: Մարդկային բոլոր ուրախութիւնները, մարդկային բոլոր վշտերն ահա երկու հազար տարի է արդէն, որ սաղմոսներից մէկում գտնում են իրենց ձայնը, իրենց երգը, իրենց հառաչանքը: Եւ այդպէս է լինելու միշտ: Յաջողութեան պահերի կամ ձախորդ օրերի համար, վշտահար հոգու ներանձնական աղօթասացութեան կամ հաւաքական ծիսակատարութիւնների համար, Սաղմոսարանը շարունակում է մնալ աղօթքի մեծ մատեանը: Սաղմոսներում գործածուած բանաստեղծական պատկերները յաճախ որոշակի չափով խորթ են մեր դարաշրջանին. նրանց տեսադաշտը, նաեւ հոգեւոր իմաստով, յաճախ միայն մասնակի է համընկնում մերինի հետ. մի խօսքով, նրանցում ամէն բան մատնանշում է մի մշակոյթ եւ մի դարաշրջան, որոնք տարբեր են մերինից: Եւ սակայն, ո՞վ է երբեք ընթերցել կամ արտասանել «Ողորմեա ինձ, Աստուած»¹, կամ «Ի խորոց»², կամ էլ հանդիսաւոր «Ալէլուիա»ներից մէկն ու մէկը³, առանց խորապէս տպաւորուելու եւ հոգեպէս ցնցուելու: Անցեալի՛ տաղեր եւ աղօթքներ, այսօրուա՛յ տաղեր եւ աղօթքներ:

Կրօնական եւ ծիսական տաղերի հաւաքածոյ

Սաղմոսների գիրքը կամ Սաղմոսարանը Աստուածաշնչի գրքերից մէկն է, ուր ամփոփուած են հարիւր յիսուն սաղմոսներ:

Բազմաթիւ աղօթքների եւ ծիսական տաղերի է հնարաւոր հանդիպել Աստուածաշունչը կազմող գրքերից իւրաքանչիւրում: Որոշ հատուածներ գտնուում են պատմական գրքերում. Մովսէսի օրհներգը⁴, Ջրհորի երգը⁵, Դեբորայի յաղթական օրհներգը⁶, Դաւթի եղբերգութիւնը Սաւուղի ու Յովնաթանի վրայ⁷, Յուդա եւ Սիմոն Մակաբայեցիների գովասանական ներբողը⁸, մինչեւ որ հասնում ենք Նոր Կտակարանի օրհներգներին. «Մեծացուցէ»⁹, «Օրհնեալ Տէր Աստուած»¹⁰, «Արդ արձակես»¹¹ եւ այլն: Մարգարէական գրքերից բազմաթիւ հատուածներ ունեն միեւնոյն նկարագիրը: Գոյուլթիւն ունէին ուրիշ հաւաքածոներ եւս, որոնց սակայն միայն անունն է

¹ Սղմ 51

² Սղմ 130

³ Օրինակի համար՝ Սղմ 150

⁴ Ել 15, 1-21

⁵ Թց 21, 17-18

⁶ Դա 5

⁷ 2Սմ 1, 17-27

⁸ 1Մկ 3, 3-9

⁹ Ղկս 1, 47-55

¹⁰ Ղկս 1, 68-79

¹¹ Ղկս 2, 29-32

պահպանուել եւ մի քանի պատառիկ, ինչպիսիք էին Եահոնէի Պատերազմների Գիրքը¹ եւ Արդարի Գիրքը²:

Բայց հինկտակարանեան աղօթքների էական մասը գտնուում է բանաստեղծական հարիւր յիսուն տաղերում, որոնց սաղմոս անուանումը յունարէն ծագում ունի, որից է առաջացել նաեւ Սաղմոսարան անունը, որն հաւաքական իմաստով տրուում է Սաղմոսների գրքին (Ψαλτήριον. սա անունն է այն լարային գործիքի, որն ընկերակցում էր սաղմոսների երգին): Եբրայեցերէն, մինչդեռ, գովաբանութեան օրհներգները, որոնք կազմում են գրքի նշանակալի մասը, իրենց անունն են տուել ամբողջ հաւաքածոյին. Séfer Tehillim (Գովաբանութիւնների գիրք):

Սաղմոսարանը, այնպէս՝ ինչպէս այն ունենք այսօր, Երուսաղէմի Տաճարի պաշտամունքային պատասխանատուների տրամադրութեան ներքոյ էր արդէն երկրորդ Տաճարի դարաշրջանում (Ք.ա. 3րդ դար): Հնգամատեանի նմանութեամբ, այն բաժանուել է հինգ մասի, բայց հարկաւոր է ընդգծել, որ այդ բաժանումը կատարուել է բաւականին քմահաճոյ կերպով, առանց հաշուի առնելու բովանդակութեան ընդհանրութիւնները կամ գէթ հեղինակային պատկանելութիւնը: Այս բաժանումը թւում է՝ թէ կատարուել է Ք.ա. 3րդ դարում: Սաղմոսարանի եբրայեցերէն բնագրում, սակայն, հնարաւոր է զատորոշել երեք մեծ բաժիններ, որոնց բաժանումը կախուած է նրանից՝ թէ ինչ անուն է գործածուում Աստծուն դիմելու համար (առաջին եւ երրորդ մասում այդ անունն է Տէր, կամ եբրայեցերէն՝ Եահոնէ, մինչ երկրորդ մասում գործածուում է Աստուած անունը, կամ եբրայեցերէն՝ էլոհիմ). դրանք են 1-41, 42-89, 90-150:

Այսօր Սաղմոսարանում են գտնուում որոշ սաղմոսներ, որոնք նախապէս մաս են կազմել ա՛յլ հաւաքածոների, որոնց հեղինակներն են եղել Տաճարում պաշտամունքի կազմակերպման պատասխանատուները, ինչպիսիք են Ասափի (50, 73-83) եւ Կորխի որդիների (42-49, 84-85, 87-88) սաղմոսները:

Սրանցից բացի, Սաղմոսարանին են կցուել իւրայատուկ նկարագիր ունեցող ա՛յլ փոքրիկ հաւաքածոներ եւս, ինչպիսիք են ուխտաւորների աղօթագիրքը (120-134), Արքայութեան տաղերը (93-100), Սիոնի երգերը, Ալէլուիայի օրհներգները (105-107, 111-118, 135-136, 146-150):

Մէկից աւելի սաղմոսներ իրենց սեփական պատմութիւնն ու կեանքն են ունեցել իրենց վերջնական տեղն ու բովանդակութիւնը Սաղմոսարանում գտնելուց առաջ: Որոշ սաղմոսներ, որոնք միւսներից շատ աւելի հին են, դարերի ընթացքում վերընթացուել են եւ յարմարեցուել են նոր իրավիճակներին, յաճախ մինչեւ իսկ վերաշարադրուել են: Օրինակի համար, մեծապէս հետաքրքրական կը լինէր բացայայտել իմաստն ու գործածութիւնը, որ տարբեր դարաշրջաններում ունեցել են 2րդ եւ 110րդ սաղմոսները: Իսկ ուրիշ սաղմոսներ ներկայ են եղել տարբեր հաւաքածոներում միաժամանակ, ինչը որ ակնյայտ է այն սաղմոսներից, որոնց բովանդակութիւնը, գրեթէ առանց տարբերութիւնների, կրկնուում է. այդպիսիք են 14րդ եւ 53րդ սաղմոսները, 40րդ սաղմոսի 14-18 հատուածը եւ 70րդ սաղմոսը, 57րդ սաղմոսի 8-12 հատուածը (60րդ սաղմոսի 7-14 հատուածի հետ միասին) եւ 108րդ սաղմոսը:

Երբ արդէն ձեւաւորուած Սաղմոսարանն ի վերջոյ բաժանուեց, ինչպէս արդէն նշեցինք, հինգ մասի, այդ մասերից իւրաքանչիւրի աւարտին աւելացուեցին համառօտ փառաբանութիւններ, որոնք միշտ չէ՝ որ լաւ շաղկապուում են իրենց հիւրընկալող սաղմոսի բովանդակութեանը. այդպիսիք են 41, 14; 72, 18-20; 89, 52; 106, 48 հատուածները: 150րդ սաղմոսը կարծես ամբողջ Սաղմոսարանի վերջաբանն է, մինչ առաջին երկու սաղմոսները կազմում են նրա նախաբանը:

¹ Թց 21, 14

² Յս 10, 13; 2Սմ 1, 18

Հեղինակներ և թուագրում

Եբրայեցիներն բնագրի տիտղոսները վերագրում են 73 սաղմոս Դաւիթ թագաւորին, 12 սաղմոս Ասափին, 11 սաղմոս Կորխի որդիներին եւ մէկական սաղմոս Եմանին, Եթանին, Մովսէսին եւ Սողոմոնին: 35 սաղմոս զուրկ է հեղինակային ցուցմունքներից: Հարկաւոր է ընդգծել, որ սաղմոսների յունարէն թարգմանութեան տիտղոսները միշտ չէ՝ որ համաձայնոււմ են եբրայեցիներին եւ Դաւթին եւ վերագրում 82 սաղմոս: Ասորերէն թարգմանութիւնը վերոնշեալներից տարբերոււմ է է՛լ աւելի:

Այդ տիտղոսները Սաղմոսարանի կազմաւորման ժամանակաշրջանում թերեւս որպէս նպատակ չունէին ստուգութեամբ մատնանշելու տուեալ սաղմոսի հեղինակի անունը: Եբրայեցիներէնու մտածածուած բանաձեւը սոսկ որոշակի յարաբերութիւն է հաստատում սաղմոսի եւ յիշուած անձնաւորութեան միջեւ, լինի՛ տուեալ սաղմոսի բովանդակութեան պատշաճութեան պատճառով, լինի՛ որովհետեւ տուեալ սաղմոսը պատկանել էր կամ տակաւին պատկանում էր այդ անձնաւորութեան անունը կրող հաւաքածոյին: «Կորխի որդիների» սաղմոսներն, օրինակի համար, մաս էին կազմում Տաճարի երգիչների այդ ընտանիքին պատկանող երգացանկին, ինչպէս «Երգչախմբի ղեկավարի» սաղմոսները (4, 5, 6, 8 եւ այլն) տաղեր էին, որոնք կատարում էր Տաճարի երգչախումբը: Գոյութիւն ունէին «Ասափի Սաղմոսարան» եւ «Դաւթի Սաղմոսարան» հաւաքածոները: Բայց սոսկ նիւթական պատկանելութիւն ցոյց տուող այդ տիտղոսներում ժողովուրդը շատ շուտով հասաւ տեսնելու մատնանշումներ ուղղակի հեղինակի ով լինելու մասին եւ «Դաւթին» տիտղոսը կրող որոշ սաղմոսների աւելացուցին մի տեսակ ենթավերնագրեր, ուր ճշտոււմ էին թագաւորի կեանքի դրուագները, որոնց ընթացքում է իբրեւ թէ գրուել տուեալ սաղմոսը (3, 7, 18, 34, 51, 52, 54 եւ այլն): Ի վերջոյ, աւանդութիւնը յանձինս Դաւթի տեսաւ հեղինակին ո՛չ միայն անձամբ Դաւթին վերագրուող սաղմոսների, այլ մինչեւ իսկ ամբողջ Սաղմոսարանի: Եւ այդպէս էլ դրանք յաճախ անուանոււմ են մինչեւ մեր օրերը. «Դաւթի սաղմոսներ» կամ «Դաւթի սաղմոսների գիրք»:

Այս կեղծ ու շինծու մեկնաբանութիւնները, սակայն, չպէտք է մոռացութեան մատնելու տան կարեւոր եւ վաղեմի վկայութիւնը, որն ամփոփուած է սաղմոսների տիտղոսներում: Հիմնաւոր է այն կարծիքը, որ Ասափի եւ Կորխի որդիների սաղմոսները գրուել են Տաճարի երգիչների կողմից: Նմանապէս, Դաւթի անունը կրող սաղմոսների հեղինակային պատկանելութիւնը հարկաւոր է ինչ որ կերպ վերագրել Դաւիթ թագաւորին: Հաշուի առնելով այն՝ ինչ պատմական գրքերն ասում են նրա երաժշտական տաղանդի¹ եւ բանաստեղծական ձիրքերի², ինչպէս նաեւ՝ պաշտամունքի նկատմամբ ունեցած իր սիրոյ մասին³, առանց որեւէ դժուարութեան կ'ընդունենք, որ Սաղմոսարանում կան տաղեր, որոնց հեղինակն իրօք Դաւիթ թագաւորն է: Յիրաւի, 18րդ սաղմոսը մի ա՛յլ շարադրանքով մեզ է ներկայացնում մի գրութիւն, որի հեղինակային պատկանելութիւնը 2Սմ 22ի կողմից ստոյգ կերպով վերագրոււմ է Դաւթին: Դաւթեան հաւաքածոյին մաս կազմող սաղմոսներից թերեւս ոչ բոլորն են նրա գրչին պատկանում, բայց անտարակոյս է, որ այդ հաւաքածոն կազմաւորուել է որպէս սկզբնակէտ ունենալով մի միջուկ, որի դաւթեան պատկանելութիւնը ստոյգ է: Սակայն դժուար է առաւել ճշգրտումներ կատարել եւ հաստատել՝ թէ որն է սկզբնական միջուկը եւ որոնք են հետագայ յաւելումները:

Ինչպէս արդէն նշեցինք, եբրայեցիներն բնագրի տիտղոսները որոշիչ չէին եւ Նոր Կտակարանի գրքերի հեղինակները, երբ մէջբերումներ էին կատարում այս կամ այն սաղմոսից, դա կատարում էին Դաւթի անունով, համակերպուելով իրենց ժամանակուայ տիրող կարծիքին: Այդ վկայութիւնները, սակայն, առանց լուրջ պատճառի չպէտք է

¹ 1Սմ 16, 16-18; Ամս 6, 5

² 2Սմ 1, 19-27; 3, 33-34

³ 2Սմ 6, 5.15-16

անտեսուեն եւ հարկաւոր է Դաւթին՝ «Խորայէլի երգերի վայելուչ երգչին»¹ վերապահել էական դեր ու նշանակութիւն հինկտակարանեան ժողովրդի կրօնական քնարերգութեան զարգացման գործում:

Նրա կողմից տրուած զարկն ու մղումը շարունակուեց եւ Սաղմոսարանում այժմ ամփոփուած է տարբեր հեղինակների բանաստեղծական գործունէութեան բազմադարեան արդիւնքը: Այն բանից յետոյ, ինչ գիտական քննադատութիւնը սաղմոսների մեծամասնութեան շարադրումը թուագրել էր աքսորից յետոյ եւ նոյնիսկ աւելի ուշ ընկնող ժամանակահատուածում, նոյն գիտական քննադատութիւնն այժմ նախընտրում է վերադառնալ կարծիքների աւելի զգոյշ, աւելի աւանդական եւ աւելի իմաստուն արտայայտման: Թուում է, յիշաւի, որ սաղմոսներից շատերը շարադրուել են թագաւորական ժամանակաշրջանում, ի մասնաւորի՝ «թագաւորական» սաղմոսները: Նրանց բովանդակութիւնը, սակայն, շատ ընդհանուր է ու վերացական, ուստի անհնարին է առաւել ճշգրիտ թուագրումների հասնել: Եահուէի Արքայութեան սաղմոսները, մինչդեռ, որոնք լի են ուրիշ սաղմոսներից եւ Եսայի Մարգարէի գրքի երկրորդ մասից մտաբերումներով, շարադրուել են աքսորի ժամանակ: Աքսորի ժամանակ են շարադրուել նաեւ այն սաղմոսները, որոնք, 137րդ սաղմոսի նման, խօսում են Երուսաղէմի գրաւման, կործանման եւ բնակիչների տարահանման մասին: Աքսորից վերադարձը երգուում է 126րդ սաղմոսում: Ժամանակաշրջանը, որն յաջորդում է աքսորին, թուում է՝ որ արգասաւոր է եղել սաղմոսների շարադրումով, քանի որ աքսորից յետոյ է ծիսական պաշտամունքը նոր զարգացում ապրել վերանորոգուած Տաճարում, ուր երգիչների դասակարգային պատիւն աւելի է բարձրացուել եւ հաւասարուել է ղեւտացիներին, եւ ուր իմաստունները նոյնպէս որդեգրել են սաղմոսների գրական կերպը՝ տարածելու համար իրենց ուսուցումները, ինչպէս վարուել է Սիրաքի որդի Յեսուն: Թերեւս հարկաւոր է աւելի վար եւս իջնել եւ հասնել պարսկական դարաշրջանին, մակաբայեցիներին վերագրելով մի քանի սաղմոսների հեղինակային պատկանելութիւնը: Խօսքը վերաբերում է յատկապէս 44րդ, 74րդ, 79րդ եւ 83րդ սաղմոսներին, բայց ուսումնասիրողների կողմից առաջարկուած պատճառաբանութիւնները բաւական հիմք չեն տալիս այդքան վաղ թուագրումը հաւանական համարելու համար:

Գրական կերպերը

Սաղմոսների լաւագոյն դասակարգումը ստանում ենք գրական կերպերի ուսումնասիրութեամբ: Ոճական այս տեսանկիւնից դիտուած, Սաղմոսարանում կարելի է զանազանել գրական երեք կերպերի գործածում. օրհներգներ, աղերսանքներ եւ երախտագիտութեան մատուցման աղօթքներ: Այս բաժանումը սպառիչ չէ, որովհետեւ գոյութիւն ունեն նաեւ երկրորդական կերպեր, կամ իրենց հիմնական յատկանիշներից շեղուող կերպեր, կամ էլ՝ խառը կերպեր: Ինչպէս նաեւ, այս բաժանումները միշտ չէ, որ համապատասխանում են խմբաւորումներին, որոնք ձեւաւորուում են սաղմոսներից իւրաքանչիւրի նիւթի կամ նպատակների հիման վրայ:

ա) **Օրհներգները:** Այսպիսիք են 8, 19, 29, 33, 46-48, 76, 84, 87, 93, 96-100, 103-106, 113-114, 117, 122, 135-136, 145-150 սաղմոսները: Նրանց շարադրանքը բաւականին կայուն ոճ ունի: Նրանցից իւրաքանչիւրը սկսուում է Աստուծոն փառաբանելու յորդորով: Օրհներգի կենտրոնական մասը ներկայացնում է այդ փառաբանութեան պատճառները. Աստուծոյ կողմից բնութեան մէջ կատարուած հրաշքները, յատկապէս Նրա արարիչ գործունէութիւնը, եւ հրաշագործ միջամտութիւնները, որոնք Նա կատարում է պատմութեան ընթացքում, յատկապէս Նրա կողմից Իր ժողովրդին պարգեւուած փրկութիւնը: Սաղմոսն աւարտուում է կրկնելով սկզբնական բանաձեւը կամ խօսքը եզրափակում է աղօթքով:

¹ 2Սմ 23, 1

Այս սաղմոսների ամբողջութեան մէջ կարելի է առանձնացնել սաղմոսների երկու խումբ, որոնք միևնույնից տարբերուում են իրենց քննարկած նիւթի հիման վրայ. ա) Միոնի երգերը (46, 48, 76, 87), որոնք վախճանաբանական ակնյայտ տեսլականով պանծացնում են Սուրբ Քաղաքը, որը Բարձրեալի բնակավայրն է եւ ուխտագնացութիւնների նպատակակէտը (հմտ. Սղմ 84 եւ 122). բ) Աստծոյ Արքայութեան սաղմոսները (յատկապէս 47, 93, 96-98), որոնցում փառաբանում է Եհովայի տիեզերական թագաւորութիւնը, մի ոճով՝ որն յիշեցնում է մարգարէական գրութիւնները: Քանի որ գործածում են մարդկային թագաւորների գահակալման արարողակարգի բառապաշարն ու պատկերները, ուսումնասիրողներից ոմանք ենթադրել են՝ թէ Իսրայէլում գոյութիւն է ունեցել Եհովայի թագաւորման տարեկան տօն, ինչպէս Բաբելոնում կատարւում էր Մարգոք չաստծոյ համար: Բայց այդ ենթադրութիւնը գրեթէ ամբողջովին անհիմն է ու անապահով:

բ) **Եղբրասնիներ կամ քառասնի սաղմոսներ, կամ էլ՝ ողբասացութիւններ:** Ի տարբերութիւն օրհներգների, աղերսանքները չեն երգում Աստծոյ փառքը, այլ ուղղակի դիմում են Նրան: Ընդհանրապէս սկսւում են օգնութեան կանչով, որն ապա վերածւում է աւելի ծաւալուն աղօթքի կամ վստահութեան արտայայտութիւնների: Սաղմոսի կենտրոնական հատուածում սաղմոսերգուն ջանում է շարժել Աստծոյ գութը, նկարագրելով աղերսարկունների տխուր իրավիճակը. եւ սա անում է մեծապէս աւանդական փոխաբերութիւններով, որոնք միայն հազուադէպ են թոյլատրում յստակ կերպով ճշտել աղօթքի պատմական հանգամանքները. խօսւում է անդնդախոր ջրերի մասին, մահուան կամ դժոխքի (չէր) դարանակալման մասին, թշնամիների կամ գազանների մասին (չներ, առիւծներ, եղջեր), որոնք սպառնում են կամ յօշոտում, ոսկորների մասին, որոնք ցամաքում են կամ փշրւում, սրտի մասին, որն ուժգին բաբախում է ու սարսափում: Կան անմեղութեան ցոյցեր (7, 17, 26) եւ մեղքերի խոստովանութիւններ, ինչպէս «Ողորմեա ինձ, Աստուած» (51) եւ ապաշխարութեան ա՛յլ սաղմոսները: Աստծոյ առաջ յիշատակում են Նրա հինաւուրց շնորհներն ու պարգեւները, կամ էլ՝ Նրան են ուղղւում մի տեսակ յանդիմանութիւններ իր ժողովրդին կամ իր ծառաներին մոռացած կամ նրանց կեանքում բացակայ թուալու համար (9-10, 22, 44): Բայց հաստատակամ արտայայտւում է նաեւ Նրա հանդէպ մշտապէս վառ պահուող վստահութիւնը (3, 5, 42-43, 55-57, 63, 130 եւ ուրիշներ): Աղերսանքի սաղմոսը երբեմն ա՛յլ բան չէ, եթէ ոչ միայն՝ վստահութեամբ լի կոչ կամ դիմում (4, 11, 16, 23, 62, 91, 121, 125, 131): Յաճախ աղերսանքի աղօթքն աւարտւում է, եւ դա շատ կտրուկ ու յանկարծակի կերպով, վստահութեան արտայայտութեամբ՝ որ աղօթքն արդէն իսկ ընդունուել է, եւ ուստի՝ նաեւ երախտագիտութեան մատուցմամբ (6, 22, 69, 140):

Այս աղերսանքները կարող են լինել **հասակային կամ անհասակային:**

ա) Հաւաքական աղերսանքներ են ներկայացնում 12, 44, 60, 74, 79, 80, 83, 85, 106, 123, 129, 137 սաղմոսները: Նրանց շարադրման համար առիթ են հանդիսացել ազգային եղբրական իրադարձութիւնները, պատերազմներում պարտութիւնները, քաղաքներից մէկի կամ մի քանի քաղաքների կործանումն ու թալանը, կամ էլ՝ համատարած չքաւորութիւնն ու տարբեր տեսակի նեղութիւնները: Այդպիսի դէպքերում սաղմոսներն հայցում են ժողովրդի փրկութիւնը եւ հոգեւոր ու նիւթական վերանորոգումը: 74րդ եւ 137րդ սաղմոսները, Երեմիային վերագրուող Ողբերի նման, մտորում են Երուսաղէմի կործանման հետեւանքների մասին (Ք.ա. 587թ.): 85րդ սաղմոսն արտայայտում է աքսորից վերադարձածների զգացմունքները: 106րդ սաղմոսը ազգի մեղքերի ընդհանուր խոստովանութիւն է:

բ) Անհատական աղերսանքներ են ներկայացնում 3, 5-7, 13, 17, 22, 25, 26, 28, 31, 35, 38, 42-43, 51, 54-57, 59, 63-64, 69-71, 77, 86, 102, 120, 130, 140-143 սաղմոսները: Այս ոճի սաղմոսները խիստ բազմաթիւ են եւ նրանց բովանդակութիւնը շատ բազմազան է.

մահուան վտանգներից, հալածանքներից, աքսորից եւ ծերութիւնից բացի, չարիքները, որոնցից այս սաղմոսների հեղինակները խնդրում են ազատուել, յատկապէս հիւանդութիւններն են, զրպարտութիւններն ու յանիրաւի մեղադրանքները, եւ մեղքը: Թշնամիները, «չարագործները», որոնց դէմ սաղմոսերգուները բողոքում են ու զայրանում, յստակ անձնաւորուած չեն: Յամենայն դէպս, խօսքն այստեղ չի վերաբերում կախարհների, ինչպէս ոմանք ենթադրում են, որոնց կախարհանքների դէմ են պայքարում սաղմոսները: Ինչպէս նաեւ, այս տաղերը հաւաքական «ես»ի եզակի թուով արտայայտութիւնը չեն, ինչպէս ենթադրում են ուրիշներ: Անհիմն է նաեւ վերջերս առաջարկուած վարկածը, որի համաձայն՝ բոլոր այս սաղմոսները դրուել էին թագաւորի շուրթերին, որն Աստծոյ առաջ խօսում էր յանուն ժողովրդի: Այս աղօթքների ձայներանգը չափազանց անձնական է ու անհատական, եւ միաժամանակ՝ նրանք լիովին զուրկ են թագաւորի անձին կամ վիճակին ուղղուած ակնարկներից: Թերեւս ճիշտ է, որ այս սաղմոսներից ոմանք հետագայում յարմարեցուել եւ գործածուել են նաեւ որպէս ազգային ողբասացութիւն (22, 28, 59, 69, 71, 102): Ճիշտ է նաեւ, որ այս սաղմոսների թուին են պատկանում նաեւ թագաւորական սաղմոսներից մի քանիսը: Եւ ի վերջոյ ճիշտ է նաեւ, որ այս աղօթքները ժամանակի ընթացքում բոլորն էլ գործածուել են հասարակութեան կողմից (դրանով է բացատրուում նաեւ նրանց ներկայութիւնը Սաղմոսարանում): Բայց մնում է փաստը, որ դրանք շարադրուել են անհատների համար, կամ անհատների կողմից, յստակ ու մասնաւոր կարիքների համար: Դրանք հոգու ազդակն են, անձնական հաւատքի արտայայտութիւնը: Իրօք, դրանք երբեք պարզ ողբասացութիւններ չեն կեանքում պատահող չարիքների դէմ, այլ Աստծուն ուղղուած վստահութեան աղօթքներ են, որովհետեւ Նա կարող է օգնել դժուարութիւններում:

դ) **Երախտագիտութեան մարտօնական աղօթիչներ:** Ինչպէս արդէն նշեցինք, աղերսանքները կարող էին ակարտուել երախտագիտութեան մատուցմամբ, ուղղուած առ Աստուած, որն ընդունում է աղօթքը: Շնորհակալութեան այս արտայայտումը կարող է տաղի էական մասը դառնալ երախտագիտութեան մատուցման սաղմոսներում (18, 21, 30, 33-34, 40, 65-68, 92, 116, 118, 124, 129, 138, 144): Սրանք նոյնպէս կարող են լինել հաւաքական կամ անհատական: Ժողովուրդն Աստծուն շնորհակալութիւն է յայտնում ինչ որ մի վտանգից ազատուելու, բերքառատ տարի ունենալու, թագաւորին տրուած բարի ձիւքերի եւ օգնութեան համար: Որոշ դէպքերում սաղմոսերգուն, կրած չարիքները եւ իր աղօթքի ընդունուած լինելը յիշատակելուց յետոյ, երախտագիտութեան զգացմունքներ է արտայայտում եւ հաւատացեալներին յորդորում է իր հետ միասին փառաւորելու Աստծուն: Սաղմոսի այս վերջին մասը յաճախ առիթ է հանդիսանում նաեւ ուսուցումներ ներմուծելու համար: Երախտագիտութեան մատուցման սաղմոսների գրական կառուցուածքը մօտ է օրհներգների կառուցուածքին:

դ) **Շեղոմներ կամ Գրական խառը կերպեր:** Գրական վերոյիշեալ կերպերի միջեւ սահմանները բաւականին թոյլ են եւ յաճախ պատահում է, որ դրանք խառնուում են միմեանց: Կան, օրինակի համար, ողբասացութիւններ, որոնք յաջորդում են վստահութեան աղօթքներին (27, 31), կամ որոնց յաջորդում են երախտագիտութեան մատուցման օրհնութիւններ (28, 57): 89րդ սաղմոսը սկսում է որպէս օրհներգ, շարունակուում է պատգամի խօսքերով եւ ակարտուում է ողբասացութեամբ: 119րդ երկարաշունչ սաղմոսը օրհնքին ուղղուած օրհներգ է, բայց նաեւ անհատական ողբասացութիւն է եւ ներկայացնում է իմաստասիրական ուսուցումներ: Բազմաթիւ տարրեր, ուստի, որոնք ինքնընթացիկ օտար են քնարերգութեանը, ներմուծուել են Սաղմոսարանից ներս: Արդէն ակնարկեցինք իմաստասիրական նիւթերին եւ արդէն ասացինք, որ հանդիպում են երախտագիտութեան մատուցման որոշ սաղմոսներում: Դրանք երբեմն այնքան ծաւալուն են, որ դրանց հիւրընկալող սաղմոսները ոմանց կողմից անուանուում են, բաւականին անճիշտ կերպով, ուսուցողական սաղմոսներ: Իրականում 1, 112 եւ 127 սաղմոսները իմաստասիրական պարզ գրութիւններ են: Բայց ուրիշ սաղմոսներ

պարունակում են նաև քնարերգական կերպի որոշակի յատկանիշներ. 25րդ սաղմոսը կապակցում է ողբասացութիւններին, 32րդը, 37րդը եւ 73րդը՝ երախտագիտութեան մատուցման աղօթքներին, եւ այլն:

Ուրիշ սաղմոսներ իրենց մէջ ներառել են պատգամներ, կամ էլ՝ հէնց իրենք են ձեւաւորուել պատգամի սկզբնական միջուկի շուրջը: Այդպիսիք են 2, 50, 75, 81, 82, 85, 95, 110 սաղմոսները: Ուսումնասիրողները վերջին ժամանակներում աւելի յակուած են կարծելու, որ խօսքը վերաբերում է իրական պատգամների, որոնք քահանաներից կամ մարգարէներից ոմանք արտասանել են Տաճարում կատարուող արարողութիւնների ընթացքում: Ուրիշներ շարունակում են այդ հատուածներում պարզապէս տեսնել մարգարէական ոճի գործածումը, առանց պաշտամունքային արարողութիւնների հետ իրական կապի: Հարցը դեռ քննարկուում է, բայց հարկաւոր է ընդունել, մի կողմից, որ Սաղմոսարանի եւ մարգարէական գրականութեան միջեւ կապերն ու յարաբերութիւններն աւելին են՝ քան միայն պատգամների թեման, եւ տարածում են բազմաթիւ ա՛յլ թեմաների վրայ, ինչպիսիք են աստուածայայտնութիւնները, գաւաթի, կրակի, հնոցի պատկերները, եւ այլն. եւ միւս կողմից, որ անժխտելի կապեր գոյութիւն ունեն Սաղմոսարանի եւ Տաճարում կատարուող ծիսական պաշտամունքների միջեւ: Այս հարցին, սակայն, դեռ կ'անդրադառնանք:

Թագաւորական սաղմոսները

Սաղմոսարանի տարբեր մասերում ցրուած են գրական տարբեր կերպերի պատկանող մի խումբ տաղեր, որոնք կոչւում են «թագաւորական» սաղմոսներ: Դրանց թուին են պատկանում թագաւորին ի նպաստ արտասանուած պատգամախօսութիւններ (2, 110), թագաւորի համար կատարուած աղօթքներ (20, 61, 72), երախտագիտութեան մատուցում թագաւորի համար (21), թագաւորի կողմից կատարուած աղօթքներ (18, 28, 63, 101), արքայական թափօրի մի երգ (132), թագաւորական մի օրհներգ (144) եւ մինչեւ իսկ թագաւորական ամուսնութեան առիթով շարադրուած մի հարսներգ (45): Խօսքը վերաբերում է հինաւուրց բանաստեղծութիւնների, որոնք շարադրուել են թագաւորական դարաշրջանում եւ իրենց բովանդակութեան մէջ արտացոլում են պալատական բառապաշարն ու արարողակարգը: Իրենց սկզբնական շարադրանքում թւում է՝ թէ խօսում են իրենց ժամանակուայ թագաւորների մասին: 2րդ, 72րդ եւ 110րդ սաղմոսները հնարաւոր է, որ եղել են թագադրման արարողութեան ընթացքում գործածուած սաղմոսներ: Նրանցում թագաւորն անուանում է Աստծոյ որդեգիր, նրա թագաւորութիւնն անվախճան է լինելու, նրա զօրութիւնը տարածուելու է մինչեւ աշխարհի ծայրերը, նա յաղթանակել է տալու զօրութեանն ու արդարութեանը, նա լինելու է իր ժողովրդի փրկիչը: Այս եւ նմանատիպ արտայայտութիւնները մեզ կարող են չափազանցուած թուալ, բայց հին ժամանակներում սովորաբար դրանք էին մաղթանքները, որոնք հարեւան ժողովուրդներն ուղղում էին իրենց թագաւորներին եւ որոնք Իսրայէլն յուսով էր, որ կ'իրականանան իր արքայատոհմի համար:

Իսրայէլում, սակայն, թագաւորն օծում էր ստանում, որով նա դառնում էր Եահուելի հպատակը, Նրա ներկայացուցիչը երկրի վրայ: Նա Եահուելի օճեալն էր, որն երբայցեքէն ասում է «Մեսիա», եւ Աստծոյ հետ կնքուած կրօնական այս յարաբերութիւնն ու դաշինքը բնորոշ յատկանիշն են թագաւորութեան գաղափարի հինկտակարանեան ընկալման, որով այն հապէս տարբերում է Եգիպտոսում կամ Միջագետքում տեղ գտած հասկացողութիւններից, թէեւ բոլորն էլ գործածում են միեւնոյն ընդհանուր բառապաշարն ու եզրաբանութիւնը: «Թագաւորական մեսիանականութիւնը», որը սկիզբ է առնում Նաթանի մարգարէութեամբ¹, կրկին վերցւում եւ զարգացւում է 89րդ եւ 132րդ, եւ էլ աւելի՝ 2րդ, 72րդ եւ 110րդ սաղմոսներում: Այս սաղմոսները սնուցում էին

¹ 2Սմ 7

ժողովրդի յոյսը այն խոստումների հանդէպ, որոնք Աստուած տուել էր Դաւթի ազգատոհմին: Եթէ «մեսիանականութիւն» ասելով հասկանում ենք սպասումը մի ապագայ թագաւորի, մի վերջին թագաւորի, որը կարող է բերել եւ պարգեւել վերջնական փրկութիւնը եւ երկրի վրայ հաստատել Աստուծոյ թագաւորութիւնը, այս սաղմոսներից ոչ մէկն այս իմաստով «մեսիանական» չէ: Բայց թագաւորական այս հնամենի տաղերից ոմանք շարունակել են գործածուել նաեւ թագաւորական վարչակարգի անկումից յետոյ եւ Սաղմոսարանի կազմում ներառուելով, թերեւս որոշակի հպումներով կամ յաւելումներով, շարունակել են սնուցել Դաւթի սերնդից ծնուած անհատական Մեսիայի սպասումը: Այս յոյսը հրեաների սրտում դեռ վառ էր Քրիստոսի գալստեան նախօրէին: Քրիստոնեաներն, ապա, այդ յոյսի իրականացումը տեսան յանձինս Յիսուս Նազովրեցու, որն էլ հէնց անուանուեց Քրիստոս, որն յունարէն նշանակում է օծեալ, ինչպէս Մեսիան եբրայեցերէնում:

110րդ սաղմոսը դառնալու էր Սաղմոսարանի այն հատուածը, որն ամենայաճախակին է մէջբերուում Նոր Կտակարանում: 45րդ սաղմոսի հարսներգը նոյնպէս մարգարէական պատկերներով ներկայացնում է Մեսիայի միութիւնը նոր Իսրայէլի հետ (այսինքն՝ Յիսուս Քրիստոսի միութիւնն Իր Եկեղեցու հետ), հետեւելով մարգարէական գրութիւններում ներկայ ամուսնական այլաբանութիւններին. այդ իմաստով էլ Պօղոս Առաքեալի կողմից վերագրուում է Յիսուսին¹: Միեւնոյն ընկալումով եւ իմացութեամբ, Նոր Կտակարանն ու քրիստոնէական ականդրութիւնը Քրիստոսի անձին են կապակցում ուրիշ սաղմոսներ եւս, որոնք թէեւ թագաւորական սաղմոսներ չեն բուն իմաստով, բայց ինչ որ կերպ արտայայտում են գալիք Մեսիայի՝ արդարների Արդարի կարգավիճակն ու զգացմունքները: Այդպիսին են 16րդ եւ 22րդ սաղմոսները, եւ որոշ հատուածներ բազմաթիւ սաղմոսներից, ի մասնաւորի՝ 8, 35, 40, 41, 68, 69, 97, 102, 118 եւ 119 սաղմոսներից: Նմանապէս, Եահոուէի Արքայութեան սաղմոսները եւս կապակցուել են Քրիստոսի Արքայութեան հետ: Թէեւ այս կապակցումներն անցնում են սաղմոսների տառացի բուն իմաստից անդին, այդուամենայնիւ պահպանում են իրենց օրինաւորութիւնը, քանի որ Սաղմոսարանը ոգեշնչող բոլոր յոյսերը լիովին իրականացել են միմիայն Աստուծոյ Որդու գալստեամբ երկիր:

Սաղմոսները եւ ծիսական պաշտամունքը

Սաղմոսարանը հինկտակարանեան ժողովրդի կրօնական տաղերի հաւաքածոն է: Գիտենք, որ երգիչներն ու երգահանները մաս էին կազմում Տաճարի անձնակազմին եւ, թէեւ յստակ կերպով յիշատակուում են աքսորից վերադարձից յետոյ միայն, անկասկածելի է՝ որ գոյութիւն են ունեցել սկզբից եւեթ: Եահոուէի տօները տօնակատարուում էին երգերով ու պարերով²: Ամս 5, 23 հատուածի համաձայն, զոհաբերութիւններն ընկերակցուում էին երգեցողութեամբ, իսկ քանի որ թագաւորական պալատը Դաւթի³ եւ Եղեկիայի օրոք, Սէնէքերբի տարեգրքերի համաձայն, ունէր իր երգչախումբը, Սողոմոնի Տաճարը նոյնպէս պէտք է որ ունենար իրենը, ինչպէս արեւելեան բոլոր մեծ սրբավայրերը: Յիրաւի, սաղմոսներից շատերը վերագրուում են Ասափին, Կորիսի որդիներին, Եմանին եւ Եթանին, որոնք բոլորն էլ, Մնացորդաց գրքերի համաձայն, նախաաքսորեան Տաճարի երգիչներից էին: Աւանդութիւնը, որը Դաւթին է վերագրում բազմաթիւ սաղմոսների շարագրումը, նրան է վերագրում նաեւ ծիսական պաշտամունքի կազմակերպումը, ներառեալ երգչախմբի ձեւաւորումը⁴, այս հարցում համաձայնուելով հին գրութիւնների հետ, որոնցում Դաւթի մասին պատմուում է՝ որ երգում ու պարում էր Եահոուէի առաջ⁵:

¹ Եբր 1, 8

² Դտ 21, 19-21; 2Սմ 6, 5.16

³ 2Սմ 19, 36

⁴ 1Մն 25

⁵ 2Սմ 6, 5.16

Բազմաթիւ սաղմոսներ պարունակում են երաժշտական կամ ծիսական ցուցմունքներ: Սաղմոսներից ոմանք կապակցւում են ծիսական որոշ արարողութիւնների, որոնց ընթացքին կարծես ընկերակցում են իրենց բովանդակութեամբ (20, 26, 27, 66, 81, 107, 116, 134, 135): Այս սաղմոսները եւ ուրիշներ (48, 65, 95, 96, 118) ակնյայտ է, որ արտասանւում էին Տաճարի տարածքում: «Աստիճանների երգ» կոչուող սաղմոսները (120-134, նաեւ 84) դէպի Տաճարն ուղղուած ուխտագնացութեան տաղեր էին: Ամենայնատակների միջից ընտրուած այս օրինակները բաւական են ցոյց տալու համար, որ բազմաթիւ սաղմոսներ, մինչեւ իսկ անհատական սաղմոսները, շարադրուել են Տաճարի ծառայութեան համար: Ուրիշ սաղմոսներ, որոնք որպէս իրենց առաջնահերթ նպատակ չունէին այս սահմանումը, առնուազն յարմարեցուել են ծիսական պաշտամունքին, օրինակի համար՝ օհնութիւնների յաւելումով (125, 128, 129):

Սաղմոսների առընչութիւնը պաշտամունքին եւ Սաղմոսարանի ծիսական նկարագիրն անժխտելի են: Բայց մեզ ընդհանուր առմամբ պակասում են այն տեղեկութիւնները, որոնց օգնութեամբ հնարաւոր կը լինէր ճշտել ստոյգ արարողութիւններն ու տօները, որոնց ընթացքում այս կամ այն սաղմոսը գործածուում էր, երգւում կամ որպէս աղօթք արտասանւում: 92րդ սաղմոսի երրայեցերէն տիտղոսն այն սահմանում է շաբաթ օրուայ համար: 24րդ, 48րդ, 93րդ եւ 94րդ սաղմոսների յունարէն տիտղոսները, մինչդեռ, դրանք սահմանում են շաբաթուայ ուրիշ օրերի համար: 30րդ սաղմոսը գործածուում էր Տաճարի նաւակատիքի տօնի ժամանակ, երրայեցերէն տիտղոսի համաձայն, իսկ 29րդ սաղմոսը երգւում էր Տաղաւարահարաց տօնի ժամանակ, յունարէն տիտղոսի համաձայն: Այս ցուցմունքները թերեւս նախնական չեն, այսինքն՝ հետագայ յաւելումներ են, բայց այնուամենայնիւ վկայում են, որ Սաղմոսարանը Տաճարում եւ ժողովարաններում գործածուող երգերի գիրքն էր, նախքան այդպիսին կը դառնար քրիստոնէական եկեղեցում:

Հինկտակարանեան բանահիւսութիւնը

Հինկտակարանեան բանահիւսութեան մէջ ոտանաւորը սովորաբար կազմւում է միմեանց միացող երկու (երբեմն նաեւ երեք կամ աւելի) նախադասութիւններով, որոնցից երկրորդը որոշակի համաչափութիւն ունի առաջինի հետ: Հինկտակարանեան բանահիւսութեանը բնորոշ այս տարրը կոչւում է «գուգահեռականութիւն»: Այն կարող է հանդէս գալ երեք եղանակով: Առաջինը դա հոմանիշների գուգահեռականութիւնն է, որն էլ ամենատարածուածն է. երկրորդ նախադասութեան մէջ ա՛յլ խօսքերով կրկնւում է առաջինի միեւնոյն գաղափարը: Օրինակի համար.

«Լեռները ցատկոտեցին խոյերի նման,
բլուրները՝ հօտի գառնուկների պէս»¹:

Կամ տակաւին.

«Լսեցէք սա, ժողովուրդներ բոլոր,
լսեցէք, աշխարհի բնակիչներ»²:

Երկրորդը դա հակադրականն է, ուր գործածուած պատկերների հակադրութիւնն աւելի է ընդգծում գաղափարը, որն հեղինակը կամենում է աւելի ուժգին դարձնել: Օրինակի համար.

¹ Սղմ 114, 4

² Սղմ 49, 2

«Իմաստուն որդին ուրախացնում է իր հօրը,
անմիտ որդին տրտմեցնում է իր մօրը»¹:

Այս երկրորդ կերպը ամենաշատ գործածուածն է ուսուցողական եւ պատգամախօսական հատուածներում: Երրորդ կերպը, որը բազմաթիւ տարբերակումներ ունի, դա զուգահեռականութիւնն է ընդարձակ իմաստով, երբ երկրորդ նախադասութիւնը պարզապէս լրացնում է առաջինին: Օրինակի համար.

«Ես լիաձայն աղաղակում եմ Տիրոջը,
Նա պատասխանում է ինձ Իր Սրբութեան լեռից»²:

Յաճախ երկու նախադասութիւններից իւրաքանչիւրը ներկայացնում է գաղափարի մի մասը, այնպէս՝ որ ամբողջական միտքը կազմուած է երկուսի կապակցումից: Այսպէս, ինչպէս վերոնշեալ օրինակում է, գաղափարն այն չէ՝ որ իմաստուն որդին ուրախացնում է միայն հօրը, իսկ անմիտ որդին տրտմեցնում է միայն մօրը, այլ երկուսն էլ, ակնյայտօրէն, ուրախութեան կամ տրտմութեան պատճառ են «ծնողների» համար: ԳՂրդ սաղմոսի

«Առաւօտեան աւետարանել Քո սէրը,
հաւատարմութիւնդ՝ գիշերուայ ընթացքում»

խօսքերը նշանակում են աստուածային սէրն ու հաւատարմութիւնն աւետարանել ամէն օր կամ ամբողջ օրուայ ընթացքում:

Թէեւ առաւել յաճախակի են երկմասանի նախադասութիւններով կազմուած ոտանաւորները, կան նաեւ, ինչպէս արդէն ասացինք, եռամասն կամ աւելի բազմամասն նախադասութիւններով կազմուած ոտանաւորներ: Սաղմոսարանի առաջին տաղն արդէն սկսում է եռամասն նախադասութեամբ.

«Երանելի է այն մարդը, որը չի հետեւում չարագործների խորհուրդներին,
չի քայլում մեղաւորների ճանապարհներով,
չի մասնակցում պարծենկոտների հաւաքներին»:

Եթէ ուշադրութիւն ենք դարձնում, ակնյայտ երեւում է, որ այստեղ չարագործները, մեղաւորները եւ պարծենկոտները գործածուած են որպէս հոմանիշներ: Ընդհանուր առմամբ, զուգահեռներին ուշադրութիւն դարձնելը մեծապէս օգտակար է գրութեան իմաստն անսխալ հասկանալու համար: Ընթերցելով

«Աստուած, Մեսիա Թագաւորին տուր դատաստանդ,
արդարութիւնդ՝ Թագաւորի որդուն»³,

հասկանում ենք, որ խօսքը չի վերաբերում երկու տարբեր անձանց, որոնց համար խնդրում են երկու տարբեր շնորհներ, այլ աւելի՛ որ խնդրոյ առարկայ հանդիսացող Թագաւորը պատկանում է Թագաւորական գերդաստանի:

Սաղմոսների համարակալումը

Սաղմոսները միեւնոյն կերպ համարակալուած չեն երբայցեքէն բնագրում եւ յունարէն Եօթանասնից թարգմանութիւնում: Երկու համարակալումները միմեանց համապատասխանում են միայն առաջին ութ եւ վերջին երեք սաղմոսների համար:

¹ Առկ 10, 1

² Սղմ 3, 5

³ Սղմ 72, 1

Երբայեցերէն բնագրի եւ յունարէն թարգմանութեան համարակալումները միմեանցից տարբերուում են մէկ միաւորով, որի պատճառն այն է, որ յունարէն թարգմանութիւնը միմեանց է միացնում երբայեցերէն բնագրի 9րդ եւ 10րդ սաղմոսները, բայց 148րդ սաղմոսից առաջ երկու համարակալումները կրկին հաւասարուում են, քանի որ յունարէնը երկուսի է բաժանում երբայեցերէն բնագրի 147րդ սաղմոսը:

Սաղմոսարանի մեր հրատարակութիւնում (տե՛ս Պն³¹Յ³ → ²Օն³Ան բաժինը) մենք հետեւել ենք երբայեցերէն բնագրի համարակալմանը, մինչ յունարէնի տարբերակը ներկայացրել ենք փակագծերում, բնագրային համարակալման կողքին:

Սաղմոսների բառապաշարը

Սաղմոսարանում արտացոլում է հինկտակարանեան ժողովրդի աղօթքը, այսինքն այն պատասխանը, որն այդ անձինք տուել են իրենց Աստծուն: Սաղմոսներում ճշգրիտ ու անկեղծ կերպով հայելանում է փորձառութիւնը, որն հինկտակարանեան ժողովուրդն ապրել է իր պատմութեան ընթացքում:

Ընթերցողին օգնելու համար՝ գործածելու սաղմոսներն իր աղօթքներում, մի պահ կանգ ենք առնում նրանցում պարունակուած հիմնական նիւթերի ու առանցքային բառերի վրայ: Սաղմոսներում ներկայ են մի շարք տարրեր, որոնք մատնացոյց են անում ճանապարհը, որն առաջնորդում է դէպի Քրիստոս: Սուրբ Հոգին կ'օգնի մեզ զանազանելու դրանք, եթէ մեր կողմից ներդնենք ուշադրութեան ջանքն ու ճիշդը, որն անհրաժեշտ է:

ա) Ուրբ:

Աստծոյ եւ Իր ժողովրդի միջեւ Ուխտի կամ Դաշինքի կնքումը ամենակարեւոր իրադարձութիւնն է փրկութեան պատմութեան ընթացքում: Դա իրադարձութիւն է, դէպք, իրականութիւն, ո՛չ թէ սոսկ գաղափար: Տեղի է ունեցել Աստծոյ նախաձեռնութեամբ, ո՛չ թէ մարդկանց: Սաղմոսները բազմաթիւ անգամներ յիշատակում են այս եզակի իրադարձութիւնը, խօսքերով ու արտայայտութիւններով, որոնք հարկաւոր է ճանաչել:

Ուխտը դա սիրոյ յարաբերութիւն է Աստծոյ եւ մարդկանց միջեւ: Մի սէր, որը ճրիհանորհ է ու ողորմած, հաւատարիմ ու իրական, գործովալի ու ամրապինդ. մի սէր, որը պարգեւում է շնորհն ու ներումը, որն արտայայտուում է որպէս ինքնանուիրում, որն հրաւէր է ուղղում պատասխանելու, որն ընտրում է մի ժողովուրդ: Ամէն անգամ, որ սաղմոսներում հանդիպում ենք սէր, ողորմութիւն, հաւատարմութիւն, ճշմարտութիւն, քնքշանք ու քաղցրութիւն, ներում, շնորհ, իմ ժողովուրդ եւ նմանատիպ խօսքերի ու արտայայտութիւնների, պէտք է ընկալենք դրանք որպէս ակնյայտ նշան, որ սաղմոսներգուն նպատակ ունի յիշեցնելու մեզ Ուխտը, անձնական յարաբերութիւնը Աստծոյ եւ Իր ժողովրդի միջեւ:

Բոլոր այս խօսքերն արտայայտում են մարդու նկատմամբ Աստծոյ կողմից տածուած սիրոյ անսպառելի հարստութիւնը:

Հաւատացեալ, հաւատարիմ կամ բարեպաշտ մարդը նա է՝ ով ազատակամ ընդունում է ապրել սիրոյ այս յարաբերութիւնը: Առողջ լինի թէ հիւանդ, հալածուած լինի թէ զրպարտութիւններով մեղադրուած, այդ մարդը յարգում է Ուխտը, ամբողջ սրտով պահպանում է Օրէնքը եւ վայելում է Աստծոյ մտերմութիւնը: Նրան էլ կարող է պատահել, որ ընկնի մեղքի մէջ, բայց իսկոյն ներում է հայցում եւ իր թերութիւնները խոստովանում է վստահութեամբ լի սրտով: Աստծոյ ծարաւն ունի եւ թողնում է, որ Աստուած առաջնորդի իրեն: Մի խօսքով, հաւատում է:

Հինկտակարանեան ժողովրդի պատմութեան ընթացքում այս հաւատարիմները, որոնք կոչուում էին «Շահուէի աղքատները», կազմում են հաւատարիմ «փոքրիկ մնացորդը», որի ամենագեղեցիկ ծաղիկն է Մարիամը, Նազարէթի Սուրբ Կոյսը:

բ) Օրէնօրէն:

Ուխտի կնքման իրադարձութիւնից անբաժանելի լինելով, Օրէնքը Աստուծոյ պարգեւն է իր ժողովրդին: Այն ներկայանում է աւելի որպէս ուսուցում, քան մի շարք պատուիրանների ու հրամանների պարտադրում (եբրայեցերէն «Թորահ» բառն, իրօք, նշանակում է ուսուցում, աւելի՝ քան պատուիրան կամ հրաման): Օրէնքն ուսուցանում է ճանապարհը, որը տանում է Աստուծոյ մօտ: Բերկրանքի ու կեանքի աղբիւր լինելով, առաջնորդում է դէպի սէրը:

Երբ սաղմոսներում կը հանդիպենք եզրերի, որոնցով ակնարկւում է Օրէնքին (պատուիրաններ, վճիռներ, հրամաններ, կամք, խոսք, խոստում, եւ այլն), պէտք է մեզ հրաւիրուած զգանք՝ իւրացնելու եւ մերը դարձնելու այն ուրախութիւնը, որի փորձառութիւնն ունեցել է սաղմոսերգուն, երբ հաւատարիմ է եղել Տիրոջը, կամ էլ վիշտը, որը նա զգացել է, երբ մտորել է սեփական անհաւատարմութեան շուրջ:

գ) Երոստոսեանի Տաճարը:

Հինկտակարանեան ժողովրդի համար Երուսաղէմի Տաճարը այն վայրն էր, ուր Աստուած «ներկայ է» եւ բացայայտում է իր փառքը: Իսրայէլացիների համար դա միակ վայրն էր, ուր կարելի է պաշտել Աստուծուն եւ գոհեր մատուցել Բարձրեալին: Երբ գտնւում էր Տաճարում, ուխտաւորն իրեն հիւր էր զգում Աստուծոյ տանը եւ այդ զգացողութիւնը բերկրանքով էր լցնում նրա սիրտն ու հոգին: Այդ վայրում Տէրը նրան էր հաղորդում իր գաղտնածածուկ խորհուրդները, նրան ապաստան էր ընծայում իր թեւերի հովանու ներքոյ (այս խօսքերով ակնարկւում էին Ուխտի Տապանակի վրայ քանդակուած քերովբէները), նրան մասնակից է դարձնում իր իսկ կեանքին:

Հաւատացեալ իսրայէլացին Տաճարում դաւանում էր միակ եւ սուրբ Աստուծոյ հանդէպ իր հաւատքը եւ բացայայտում էր եղբայրական հաղորդակցութեան բերկրանքը: Սաղմոսներում ունկնդրելով հինաւուրց ուխտաւորների ձայնը, կարող ենք մեզնում վերարծարծել Աստուծոյ մտերիմները լինելու եւ որպէս եղբայրներ ապրելու ուրախութիւնը:

դ) Մի խաղաղ, մի թագաւոր, թագաւորական մի ազգաբաժնի:

Ինչպէս որ ընտրեց մի ժողովուրդ, որի հետ դաշինք կնքեց, նմանապէս Աստուած ընտրեց մի քաղաք (Սիոնը), մի թագաւոր (Դաւիթը) եւ նրա թագաւորական սերունդը:

Սաղմոսները միշտ դրուատանքի խօսքեր են գործածում թագաւորի անձի եւ նրա թագաւորութեան մասին. թագաւորն արդար է, բարի եւ կարեկցող. ժողովրդին ազատում է նրա թշնամիներից: Այս սաղմոսները նկարագրում են օժման ու թագադրման արարողութիւնը, հաւատացեալներին յիշեցնում են Աստուծոյ կողմից Դաւիթին եւ նրա սերնդին տրուած խոստումները, պարունակում են ուրախութեան աղաղակներ ու բացականչութիւններ, գովասանքներ, ծափողջոյններ եւ հրաւերներ՝ շեփորներ հնչեցնելու ի պատիւ թագաւորի: Արտայայտում են մաղթանքներ, որ թագաւորը յաղթական կերպով մղի Աստուծոյ պատերազմները: Նրանցից ոմանք եզրափակւում են Ուխտի վերանորոգմամբ եւ Աստուծուն ուղղուած աղօթքներով:

Ինչպէ՞ս կարող ենք կրկին չվերապրել խանդավառութիւնն ու եռանդը, որոնք սաստիկ մղմամբ ժայթքում են այս տաղերից, երբ գիտենք՝ որ դրանք սոսկ մարգարէական պատկերներն էին գալիք յաւիտենական թագաւորի, Աստուծոյ Միածին Որդու, մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի:

ե) Մեծայայտ Ընդհանրացում:

Հինկտակարանեան ժողովուրդը դա մի ժողովուրդ էր, որը սպասում էր մեծ վստահութեամբ: Նրա սպասումը, սակայն, սոսկ կրաւորական չէր, այլ միշտ աւելի վառ ու կենդանի: Եւ մի սպասում էր, որը ներկայացնում է բազմապիսի դիմագծեր ու տեսանկիւններ, քանի որ նրանում միմեանց են խառնւում հասարակական, քաղաքական եւ յատկապէս կրօնական տարբեր տարրեր:

Իր թագաւորական ընտանիքն անհետացել էր, բայց Իսրայէլը տակաւին սպասում էր Մեսիային, որը ծնուելու էր Դաւիթի սերնդից եւ ժառանգորդն էր լինելու Դաւիթին տրուած

աստուածային խոստումների ու օրհնութիւնների: Մեսիան ժողովրդին ազատելու էր մեղքից եւ օտարերկրացիների լծից: Նա Միջնորդն էր լինելու Նոր Ուխտի:

Հինկտակարանեան ժողովուրդը սպասում էր գալուստը նոր ժամանակների, «մեսիանական ժամանակների»։ դա լինելու էր խաղաղութեան ու արդարութեան դարաշրջան:

Հինկտակարանեան ժողովուրդն, ի վերջոյ, սպասում էր Եսայիի օրուան եւ Նրա Արքայութեան գալստեանը, ուր լիովին կատարուելու էին բոլոր խոստումները: Այդ օրը հասնելու է ժամանակների վախճանին:

Մենք նոյնպէս սպասում ենք լիակատար յայտնութեանը Արքայութեան, որն Յիսուս Քրիստոս արդէն իսկ հաստատել է Իր առաջին գալստեամբ աշխարհ:

դ) Հինկտակարանեան փօնէրը:

Խօսքը վերաբերուում է տարեկան տօնակատարութիւններին ի պատիւ Աստծոյ, որը փրկում եւ վերամիաւորում է Իր ժողովրդին: Ամենահինը դա Տաղաւարահարաց տօնն էր, իսկ հետագայում հաստատուեցին նաեւ Զատիկն ու Պենտեկոստէն: Իր բոլոր տօների ընթացքում, Հինկտակարանեան ժողովուրդն իր երախտագիտութիւնն էր յայտնում Աստծուն Նրանից ստացած պարգեւների համար: Անպայման յիշատակում էր իր ազատագրման պատմութիւնը (Եգիպտոսից ելքը, անապատով անցնելը, Օրէնքի յանձնումը): Դաւանում էր իր հաւատքը եւ վերարժարժում էր իր գիտակցութիւնը, որ ինքը Աստծոյ ժողովուրդն էր, որի մէջ պէտք է իրականանային աստուածային խոստումները: Հինկտակարանեան ժողովուրդն իր անցեալի եւ իր հաւատքի ամբողջ հարստութիւնը վերապրում էր ծիսական արարողութեան, պաշտամունքի ընթացքում: Տօներից իւրաքանչիւրի ընթացքում մտաբերում էր եւ վառ էր պահում իր նախնիների կողմից ապրուած հրաշալի դէպքերի յիշատակը, եւ ուրախութեամբ հռչակում էր, որ նոյն ողորմածն Աստուած շարունակում է գործել իրենց կեանքում (ներում է, ազատում է թշնամիներից, հիւանդութիւններից, մահից)։ ի վերջոյ, վերարժարժում էր ապագայի հանդէպ յոյսը:

Այսինքն, տօնը հաւատացեալին առիթ է ընծայում ուրախութեամբ վերապրելու, ծիսական արարողութեան կատարմամբ իսկ, իր փառահեղ անցեալը, ապրելու ներկան եւ յոյսով ընդառաջ գնալու ապագային: Միեւնոյն բանն է տեղի ունենում, երբ Եկեղեցին ծիսակատարում է մեր փրկութեան խորհուրդները:

է) Արարչի յաղթական մարտնչումները:

Սրբազան պատմութիւնն ունի իր հանգրուաններն ու իր դերակատարները: Հինկտակարանեան մտածողութեան մէջ սրբազան այդ պատմութիւնը պատկերացում է որպէս մի պայքար, որը շարունակուելու է մինչեւ վճռական ու վերջնական յաղթանակը:

Արարիչ Աստուածը նկարագրուում է, բազմաթիւ հին ժողովուրդների աւանդութիւնների համաձայն, որպէս Նա՝ ով կարգուկանոն է հաստատում քաոսի, սկզբնական խառնաշփոթութեան մէջ: Աստուածաշունչը չի նկարագրում այդ պայքարն ու մարտնչումները: Միայն ասում է, որ այն տեղի է ունեցել եւ մատնանշում է դրա արդիւնքը. Եսայիի յաղթանակը: Նախեւառաջ ծովի դէմ, որի ծոցում բացում են անդունդները, մահուան խորքերը: Ապա ծովային հրէշների դէմ (Ռահաբի, Լեւիաթանի, վիշապի), եւ ի վերջոյ՝ նաեւ դժոխքի դէմ, որը խաւարի ու մահուան թագաւորութիւնն է:

Աստծոյ մարտնչումները շարունակուում են պատմութեան ընթացքում, ուղղուելով օտարերկրացի ազգերի ու ժողովուրդների դէմ, այսինքն՝ հեթանոսների դէմ եւ այն գաղտնածածուկ ուժերի դէմ, որոնք կանգնած են հեթանոսների ետեւում (դեւերը): Աստուած, ի վերջոյ, մարտնչում է ամբարիշտի դէմ (չարի իշխանի) եւ նրա բոլոր հետեւորդների դէմ:

Սաղմոսներում հանդիպում ենք չարագործների դէմ արտասանուած բազմաթիւ նզովքների ու անէծքների, որովհետեւ նրանք ճնշում ու հարստահարում են աղքատներին: Հանդիպում ենք նաեւ աղքատների աղօթքների ու աղաչանքների, որոնք հայցում են ազատագրում հալածանքներից: Մարդիկ ամբարիշտ կամ արդար են այն

չափով, որքանով մերժում կամ ընդունում են Աստծոյ խօսքը: Ամբարիշտը չի ընդունում Տիրոջը, փորձում է ծաղրել Նրան եւ նրանց՝ ովքեր մեծարում են Նրան: Ամբարիշտը սիրում է կեղծիքը, աշխատում է խաբել ուրիշներին եւ անարգում է Աստծոյ փառքը: Ամբարիշտը Տիրոջ հիւրը չէ եւ իր հայեացքն ուղղում է կուռքերին, որոնք սակայն չեն կարող փրկել:

Վերջնական յաղթանակը տեղի է ունենալու Եահոշի օրը, վճռական ու անյետսկոչելի եղանակով:

Այս պայքարը արձագանքներ է գտնում սաղմոսներում: Աստծոյ յաղթանակը բխեցնում է գովաբանութեան շարահաններ եւ աստուածային փառքին ուղղուած ծափողոյններ: Սաղմոսներում մեծապէս յաճախակի են Տիրոջ կողմից գործուած սքանչելիքներն ու հրաշքները երգելու, օրհնելու, փառաբանելու, մեծարելու, աւետարանելու եւ հռչակելու կոչերն ու հրաւերները: Արարչագործութիւնն ու փրկագործութիւնը այս փառաբանութեան հիմնական շարժառիթներն են: Եւ ամբողջ Սաղմոսարանում վառ կենդանութեամբ թրթռում է վերջնական յաղթանակի յոյսը: Ահա այսպէս էր աղօթում Հին Ուխտի ժողովուրդը:

Սաղմոսների որպէս քրիստոնէական աղօթք

Ինչպէ՞ս են սաղմոսները կարողանում սնուցել մշակութային ամենատարբեր միջավայրերում ապրող բազմաթիւ մարդկանց աղօթքը: Ինչո՞ւ են այսօր եւս շարունակում լինել Եկեղեցու՝ Աստծոյ նոր ժողովրդի հիմնական եւ գերագոյն աղօթքը:

Կարող ենք ասել, որ դա տեղի է ունենում, որովհետեւ սաղմոսները նման են մի հայելու, ուր մարդը վերագտնում է ինքն իրեն, ուրախութեան, խաղաղութեան, տառապանքի, հիւանդութեան իր ամենախորին փորձառութիւններում: Այս պատճառով է, որ սաղմոսները ամենամարդկային աղօթքներն են բոլոր ժամանակների մարդկանց համար:

Աստուածաշունչն ինքը մի հայելու նման է, ուր Եկեղեցին տեսնում է Աստծոյ Դէմքը: Սաղմոսներն աղօթելով, Եկեղեցին բացայայտում է Յիսուսի կենդանի պատկերը: Եւ սեփական նախասահմանումի գիտակցութիւնն է ձեռքբերում, տեսնելով՝ թէ ինչպէս են սաղմոսներն իրականանում յանձինս Քրիստոսի: Առաջին քրիստոնեաների համայնքներում գրեթէ իսկոյն սկիզբ էր առել սաղմոսները Քրիստոսին կապակցելու գործընթացքը: Քրիստոնեաներս, սաղմոսներն աղօթելով, աղօթում ենք Քրիստոսի հետ եւ սովորում ենք յառաջ ընթանալ տառապանքների եւ ուրախութիւնների, յոգնութիւնների եւ յոյսերի, դժուարութիւնների եւ հալածանքների միջով, ունենալով վերջնական յաղթանակի անդրդուելի վստահութիւնը:

Սաղմոսներն իսկապէս խօսում են Յիսուս Քրիստոսի մասին եւ իրենց մէջ բովանդակում են Նրա ձայնը: Պատկերները, որոնք քիչ առաջ քննարկեցինք, իրենց լիակատար իրականացումը գտնում են յանձինս Յիսուս Քրիստոսի: Իր արեան հեղմամբ Նա կնքեց նոր եւ յաւիտենական Ուխտը¹: Յիսուս Նազովրեցին, Սուրբ Կոյս Մարիամի Որդին, բոլոր ժամանակների, բոլոր վայրերի եւ բոլոր ազգութիւնների մարդկանց յայտնեց, որ Աստուած բարի է եւ արդար, կարեկցող եւ ողորմած, հաւատարիմ եւ ճշմարտախօս: Իրօք, յանձինս Յիսուս Քրիստոսի «յայտնուեց Աստծոյ շնորհը, որը փրկութիւն է պարգեւում բոլոր մարդկանց»²:

Յիսուս, Խաչի վրայ, սաղմոսներում նկարագրուած արդարն է: Դաժանօրէն հալածուած եւ առանց պատճառի ատուած, տառապանքի ներքոյ կքուած, անարգուած ու ծաղրուածանակի ենթարկուած, Նա վստահութեամբ ապաւինեց Հօրը եւ մինչեւ վերջ կատարեց Նրա կամքը:

¹ Մտթ 26, 28; Ղկս 22, 20; 1Կր 11, 25; Եբր 8, 6

² Տիտ 2, 11-14

Յիսուս ենթարկուեց Օրէնքին, բայց այն հասցրեց իր իմաստի ու նշանակութեան լիութեանը¹: Մեզ մի նոր պատուիրան տուեց² եւ ասաց, որ Ինքն է ճշմարտութիւնը, կեանքը եւ ճանապարհը, որն առաջնորդում է դէպի Հայրը³: Ընդդէմացաւ փարիսեցիների ու դպիրների կեղծ «օրինապաշտութեանը», որովհետեւ Աստուծոյ Օրէնքն ուսուցանելու նրանց կերպն այլալուծ ու թաքցնում էր Հօր ողորմութեամբ հարուստ Դէմքը:

Յիսուսի Մարմինը ճշմարիտ Տաճարն է: Խաչի վրայ ընծայուած, վերջնական վայրն է Աստուծոյ հետ մարդկանց հանդիպման: Նրա թշնամիները իրաւունք էին ստացել կործանելու Նրա Մարմնի Տաճարը, բայց Նա այն վերակերտեց երեք օրում⁴: Յիսուսը սպասուած թագաւորն է, ճանաչուած որպէս Դաւթի որդի⁵ եւ ժողովրդի կողմից ընդունուած որպէս այդպիսին, բայց նաեւ մերժուած իրեններից, որոնք չընդունեցին Իրեն⁶. նշան հակառակութեան, որպէսզի բացայայտուէին մտքերը բազում սրտերի⁷:

Յիսուս յաղթական թագաւորն է, որը պարտութեան է մատնել աշխարհին ու սատանային, մեղքին ու մահուանը⁸: Նրա թագաւորութիւնը մօտ է եւ արդէն իսկ մեր մէջ է⁹, բայց Նրա թագաւորութիւնն «այս աշխարհից չէ»¹⁰: Նրա թագաւորութեան լիակատար իրականացումը դեռ պէտք է գայ. տեղի է ունենալու ժամանակների վախճանին¹¹:

Սպասելով Եահուէի օրուան եւ վերջնական յաղթանակին թշնամի գորութիւնների դէմ, որոնք համախմբւում են իր դէմ պատերազմելու համար¹², Քրիստոսի Եկեղեցին արթուն հսկում է եւ աղօթում է իր Տիրոջը, գործածելով այն խօսքերը, որոնք խօսում են Նրա մասին եւ որոնք հէնց Ինքն է ներշնչել: Եւ ճիշդ ու ջանք է գործադրում, որպէսզի կեանքը, որով այդ խօսքերը ներծծուած են, շուրթերից անցնի սրտին, իսկ սրտից՝ գործերին:

Սուրբ Հոգու՝ սաղմոսների աստուածային ներշնչողի շնորհիւ Եկեղեցու աղօթքը հասնում եւ փարւում է բոլոր մարդկանց: Մեզ եւ բոլորիս մաղթենք, որ սաղմոսներն իսկապէս, Աստուծոյ օգնութեամբ, մեզ առաջնորդեն իւրացնելու եւ մերը դարձնելու մեր եղբայրների ու քոյրերի ուրախութիւններն ու յոյսերը, տրամութիւններն ու տագնապները:

Հոգեւոր արժէք

Եզրափակելու համար բաւական են սակաւաթիւ խօսքեր, քանի որ սաղմոսների կրօնական հոգեւոր հարստութիւնն այլեւս ակնյայտ է: Աղօթքներն են եղել Հին Կտակարանի, ուր Աստուած Ինքը ներշնչել է զգացումները, որոնք իր որդիները պէտք է ունենան իր նկատմամբ, եւ խօսքերը, որոնք պէտք է ծառայեն Իրեն դիմելու համար: Գործածուել են մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնի, Առաքեալների ու առաջին Մարտիրոսների կողմից: Քրիստոնեայ Եկեղեցին, առանց նրանց բովանդակութեան մէջ փոփոխութիւններ մտցնելու, սաղմոսները դարձրել է իր պաշտօնական աղօթքը: Առանց փոփոխութիւնների. գովաբանութեան, աղերսանքի կամ

¹ Գղտ 4, 4

² Յվհ 13, 34

³ Յվհ 14, 6

⁴ Յվհ 12, 12-13

⁵ Մտթ 1, 1

⁶ Յվհ 1, 11

⁷ Ղկս 2, 34-35

⁸ Յվհ 16, 33; Ծնդ 3, 15; Ղկս 11, 14-22; Յվհ 12, 31; Յյտ 12, 10

⁹ Մրկ 1, 15

¹⁰ Յվհ 18, 36

¹¹ 1Կր 15, 24-25

¹² Յյտ 2, 26-29; 19, 11-21

երախտագիտութեան այս աղաղակները, թէեւ սաղմոսերգուներից քաղուել են նրանց դարաշրջանին եւ նրանց անձնական փորձառութիւններին բնորոշ հանգամանքներում, տիեզերական հնչողութիւն ունեն, քանի որ արտայայտում են դիրքորոշումը, որն իւրաքանչիւր մարդ պէտք է ունենայ Աստծոյ առաջ: Առանց բառապաշարային բովանդակութիւնը փոփոխելու, բայց իմաստի ու նշանակութեան նկատելի հարստացումով, Նոր Ուխտի հաւատացեալը փառաբանում է Աստծուն եւ Նրան երախտագիտութիւն է յայտնում իր աստուածային կեանքի գաղտնիքը յայտնելու, իր Որդու արեամբ մեզ փրկելու եւ իր Սուրբ Հոգին մեզ պարգեւելու համար: Այս իսկ պատճառով, ծիսական աղօթքների ընթացքում սաղմոսներից իւրաքանչիւրն աւարտում է Ամենասուրբ Երրորդութեանն ուղղուած փառատրութեամբ. «Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»: Հինաւուրց աղօթքներն առաւել հրաբորբոք են դառնում, այն բանից յետոյ՝ ինչ Ընթրիքը, Խաչը եւ Յարութիւնը մարդկութեանը յայտնեցին Աստծոյ անսահման սէրը, մեղքի համատարածութիւնն ու ծանրութիւնը, արդարներին խոստացուած փառքը: Սաղմոսերգուների կողմից հռչակուած յոյսերն իրականանում են: Մեսիան եկել է: Նա թագաւորում է իր Եկեղեցում եւ բոլոր ազգերն ու ժողովուրդները կանչուած են Նրան փառաբանելու:

